

2011 թվականի ապրիլի 8-ին ժամը 14.00-ին կայացած՝ Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհրդի նիստի

քաղ. Երևան

Մասնակցում էին՝

Ա. Ղարիբյան	ՀՀ Նախագահի գլխավոր խորհրդական, Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհրդի փոխնաագահ
Ա. Ավետիսյան	ՀՀ կրթության և գիտության նախարարի տեղակալ
Վ. Սարուբյան	ՀՀ տրանսպորտի և կապի նախարարի տեղակալ
Ս. Պետրոսյան	ՀՀ սփյուռքի նախարարի տեղակալ
Ռ. Հարությունյան	«Զարգացման հայկական գործակալություն» ՓԲԸ-ի գլխավոր տնօրեն
Ա. Գրիգորյան	Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհրդի քարտուղար
Յու. Շուքուրյան	ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի փոխնախագահ, ակադեմիկոս
Հ. Մուսայելյան	«Մինոփսիս Արմենիա» ընկերության գլխավոր տնօրեն
Կ. Վարդանյան	«Ինֆորմացիոն տեխնոլոգիաների ձեռնարկությունների միություն» ԻԱՄ-ի գործադիր տնօրեն
Փ. Գաստիել	«Օրանժ Արմենիա» ընկերության ֆինանսական տնօրեն
Գ. Բարսեղյան	«Մայքրոսոֆթ Արեյ» ՍՊԸ-ի տնօրեն
Ա. Բալդրյան	«Յունիքոմփ» ՓԲԸ-ի գլխավոր տնօրեն
Բ. Ենգիբարյան	«Ձեռնարկությունների ինկուբատոր» հիմնադրամի տնօրեն
Հ. Խանջյան	«Բի Լայն» ՍՊԸ-ի նախագահ
Հ. Ավոյան	«Սորսիո» ՓԲԸ-ի տնօրեն
Հ. Չոբանյան	«Նորք» տեղեկատվավերլուծական կենտրոն» ՓԲԸ-ի տնօրեն

Հրավիրվածներ`

Դ. Սարգսյան	ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար
Վ. Դանիելյան	ՀՀ Էկոնոմիկայի նախարարի տեղակալ
Վ. Աբրահամյան	ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի անդամ
Լ. Հունանյան	ՀՀ կառավարության աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական վարչության պետ
Վ. Կտիկյան	ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավարի խորհրդական
Կ. Բեզլարյան	ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի աշխատակազմի հարկ վճարողների սպասարկման հարկման ընթացակարգերի վարչության պետ
Մ. Փաշայան	ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի աշխատակազմի ՏՏ վարչության պետ
Կ. Թորոսյան	ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի իրավական ակտերի փորձաքննության գործակալության պետաիրավական օրենսդրության փորձաքննության բաժնի պետ
Շ. Հովսեփյան	ՀՀ կառավարության աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական վարչության առաջատար մասնագետ
Ա. Քուչուկյան	«Երևանի մաթեմատիկական մեթոդների ԳՀԻ» ՓԲԸ-ի գլխավոր ինժեներ
Ա. Ալեքսանյան	«Արմինկո» ՍՊԸ-ի տնօրեն
Ն. Նիկողոսյան	ՀՀ Էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի բարձր և տեղեկատվական տեխնոլոգիաների վարչության պետի պաշտոնակատար
Մ. Հակոբյան	«Տեղեկատվական իրավունքի և քաղաքականության կենտրոն» ՀԿ-ի իրավախորհրդատու
Վ. Հովհաննիսյան	«Օրանժ Արմենիա» ծրագրի կոորդինատոր
Ա. Մելիքյան	«Ձեռնարկությունների ինկուբատոր» հիմնադրամի իրավաբան
Հ. Ֆարամազյան	«Ջի Էն Սի-Ալֆա» ՓԲԸ-ի գլխավոր տնօրեն
Ժ. Արամյան	«Զարգացման հայկական գործակալություն» ՓԲԸ-ի գործարարների աջակցման խորհրդի քարտուղարության պետ

Հ. Ասլանյան	«Զարգացման հայկական գործակալություն» ՓԲԸ-ի իրավաբանական բաժնի պետ	
Ա. Սարգսյան	«Զարգացման հայկական գործակալություն» ՓԲԸ-ի տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհրդի քարտուղարության առաջատար մասնագետ	ՓԲԸ-ի աջակցող
Ա. Հայիրյան	«Զարգացման հայկական գործակալություն» ՓԲԸ-ի քարտուղարության առաջատար մասնագետ	SS ՋԱԽ-ի
Մ. Մելիքյան	«Զարգացման հայկական գործակալություն» ՓԲԸ-ի հասարակայնության հետ կապերի մասնագետ	ՓԲԸ-ի

1. Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհրդի նախորդ նիստի հանձնարարականների կատարման ընթացքի մասին

(Ա. Գրիգորյան, Վ. Դանիելյան, Տ. Սարգսյան)

Քննարկումներից հետո որոշվեց՝

1. ընդունել ի գիտություն ՀՀ Էկոնոմիկայի նախարարի տեղակալ Վ. Դանիելյանի զեկույցը՝ Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհրդի նախորդ նիստի հանձնարարականների կատարման ընթացքի մասին:

2. Մաքսային ոլորտում առկա խնդիրների մասին

(Կ. Վարդանյան, Տ. Սարգսյան)

Քննարկումներից հետո որոշվեց՝

- 1) հավանություն տալ «ՀՀ մաքսային օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի առաջարկին.

- 2) հանձնարարել ՀՀ Էկոնոմիկայի նախարար Տ. Դավթյանին՝ հնարավորինս սեղմ ժամկետներում Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհրդի անդամներին ներկայացնել (շրջանառել) «ՀՀ մաքսային օրենսգրքում լրացումներ կատարելու

մասին» ՀՀ օրենքի նախագիծը և այն սահմանված կարգով ներկայացնել ՀՀ կառավարության նիստի քննարկմանը:

3. Օրենսդրական նախաձեռնությունների ընդունման գործընթացի թափանցիկության ապահովման խնդիրների մասին

(Կ. Վարդանյան, Տ. Սարգսյան)

Քննարկումներից հետո որոշվեց՝ ընդունել ի գիտություն ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ Վ. Դանիելյանի և «Ինֆորմացիոն տեխնոլոգիաների ձեռնարկությունների միություն» ՀԿ-ի գործադիր տնօրեն Կ. Վարդանյանի հաղորդումները՝ օրենսդրական նախաձեռնությունների ընդունման գործընթացի թափանցիկության ապահովման վերաբերյալ:

4. ՀՀ էլեկտրոնային առևտրի զարգացումը խթանող անհրաժեշտ խնդիրների մասին

(Կ. Վարդանյան, Տ. Սարգսյան)

Քննարկումներից հետո որոշվեց՝

1) հանձնարարել ՀՀ տրանսպորտի և կապի նախարար Մ. Վարդանյանին՝ «Հայփոստ» ՓԲԸ-ի հետ համատեղ քննարկել ՀՀ-ում էլեկտրոնային առևտրի ինստիտուտի զարգացմանն ուղղված նոր ծրագրի իրականացման հնարավորության հարցերը.

2) առաջարկել «Ինֆորմացիոն տեխնոլոգիաների ձեռնարկությունների միություն» ՀԿ-ի գործադիր տնօրեն Կ. Վարդանյանին՝

ա. համագործակցելով ՀՀ կենտրոնական բանկի, ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության, ՀՀ ֆինանսների նախարարության և ՀՀ էկոնոմիկայի ներկայացուցիչների հետ՝ քննարկել ՀՀ-ում էլեկտրոնային առևտրի ինստիտուտի զարգացման ետ կապված հարցերը.

բ. ուսումնասիրել մինչև 150.0 հազ. դրամի չափով ապրանքների համար սահմանված արտոնության հետ կապված խնդիրները և Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհրդի հաջորդ նիստում ներկայացնել համապատասխան առաջարկություն:

5. Էլեկտրոնային եղանակով հարկային հաշիվների դուրսգրման կարգի իրականացման ժամանակ առաջացող խնդիրների մասին

(Կ. Վարդանյան, Տ. Սարգսյան)

Քննարկումներից հետո որոշվեց՝

1) առաջարկել «Ինֆորմացիոն տեխնոլոգիաների ձեռնարկությունների միություն» ՀԿ-ի գործադիր տնօրեն Կ. Վարդանյանին ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի մասնագետների հետ համատեղ քննարկել ներկայացված առաջարկները և Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհրդի հաջորդ նիստում ներկայացնել միասնական տեսակետ-առաջարկ:

2) հանձնարարել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահ Գ. Խաչատրյանին՝ «Օրանժ Արմենիա» ընկերության ներկայացուցիչների հետ համատեղ քննարկել էլեկտրոնային հաշիվ-ապրանքագրերի դուրսգրման հետ կապված խնդիրները և առաջարկել լուծման հնարավոր տարբերակներ:

6. Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի նոյեմբերի 27-ի N 753 որոշման մեջ լրացում կատարելու մասին

(Ա. Մելիքյան, Տ. Սարգսյան)

Քննարկումներից հետո որոշվեց՝ հանձնարարել ՀՀ ֆինանսների նախարար Վ. Գաբրիելյանին՝ շահագրիտ կողմերի մասնակցությամբ քննարկել տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում գործող ընկերությունների գծով «Ձեռնարկությունների ինկուբատոր» հիմնադրամի ներկայացրած նվազեցումների թույլատրելի սահմանների վերանայման վերաբերյալ առաջարկության նպատակահարմարության հարցը և արդյունքները ներկայացնել ՀՀ կառավարության աշխատակազմ:

7. «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքով նախատեսված շինարարության բնագավառում նոր կարգերի իրականացման ժամանակ առաջացող խնդիրների մասին

(Կ. Վարդանյան, Տ. Սարգսյան)

Քննարկումներից հետո որոշվեց՝ հարցի քննարկումը համարել ոչ նպատակահարմար, քանի որ ՀՀ կառավարության 2011 թվականի ապրիլի 7-ի համապատասխան

որոշմամբ կանոնակարգվել է շինարարության բնագավառում լիցենզիայի տրամադրման գործընթացը:

8. «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքում կատարված լրացման արդյունքում առաջացած խնդիրների մասին

(Կ. Վարդանյան, Տ. Սարգսյան)

Քննարկումներից հետո որոշվեց՝ հանձնարարել ՀՀ ֆինանսների նախարար Վ. Գաբրիելյանին՝ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահ Գ. Խաչատրյանի և «Ձեռնարկությունների ինկուբատոր» հիմնադրամի տնօրեն Բ. Ենգիբադյանի հետ համատեղ քննարկել 2010 թվականի դեկտեմբերի 22-ի «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՕ-208-Ն ՀՀ օրենքի փոփոխության վերաբերյալ ներկայացված առաջարկության նպատակահարմարության հարցը և ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնել համապատասխան առաջարկություն:

9. Այլ հարցեր

Քննարկումներից հետո որոշվեց՝ ընդունել ի գիտություն «Սորսիո» ՓԲԸ-ի տնօրեն Հ. Ավոյանի և «Երևանի մաթեմատիկական մեթենաների ԳՀԻ» ՓԲԸ-ի գլխավոր ինժեներ Ա. Քուչուկյանի հաղորդումները:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՎԱՐՉԱՊԵՏ

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ